

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ. 26

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի
խորհրդի 16.11.2010թ. նիստի

խորհրդի 33 անդամներից ներկա էին 27-ը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի աշխատակիցների ներկայացրած հայտերի երաշխավորության հարցը:
2. Ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը:
3. ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների առաջադրում:
4. «Ակտուար մաթեմատիկայի» ամբիոնի և մասնագիտության վերանվանման հարցը:
5. Մրցույթ ֆ.մ.գ.թ. Խ.Վարդանյանին դոցենտի կոչում շնորհելու համար:
6. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին - Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի աշխատակիցների ներկայացրած հայտերի երաշխավորության հարցը:

Որոշեցին - Երաշխավորել՝

1. *«Ըստ Ֆրանկլինի ընդհանուր համակարգի շարքերի զուգամիտության և միակության հարցեր»*, ղեկավար ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Գ.Գ.Գևորգյան,
2. *«Նույնություններով և գերնույնություններով համակարգեր»*, ղեկավար ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Յու.Մ.Մովսիսյան,
3. *«Դեֆորմացվող պինդ մարմինների կոնտակտային փոխազդեցության և օպտիմալ նախազծման խնդիրներ»*, ղեկավար ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու, դոցենտ Ա.Վ.Քերոբյան,
4. *«Սպեկտրալ տեսության և օպերատորների լուծելիության տեսության որոշ հարցեր»*, ղեկավար ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Մ.Ի.Կարախանյան,

5. *«Պատկերների ճանաչումը լայնակի հատույթներով»*, ղեկավար ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Կ.Օհանյան,
6. *«Դինամիկ համակարգերի օպտիմալ կառավարումների կառուցումը լրիվ և ոչ լրիվ ինֆորմացիայի պայմաններում»*, ղեկավար ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Վ.Ավետիսյան,
7. *«Առաձգականության տեսության կոնտակտային և խառը խնդիրներ: Ալիքների դիֆրակցիան և ճառագայթումը առաձգական և էլեկտրաառաձգական միջավայրերում»*, ղեկավար ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Է.Խ.Գրիգորյան,
8. *«Դինամիկական համակարգերի ղեկավարումը, դիտումը, կոնֆլիկտային իրավիճակների ուսումնասիրումը և կիրառությունը մեխանիկական համակարգերի համար»*, ղեկավար ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Ռ.Բարսեղյան,
9. *«Դիֆերենցիալ խաղեր շատ նպատակային բազմությունների դեպքում և համակարգերի կայունության ուսումնասիրությունը»* ղեկավար ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Մ.Ս.Գաբրիելյան,
10. *«Կենսամոլեկուլյար հաջորդականությունների պարամետրական բաշխումների վերլուծություն»* ղեկավար ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Է.Ա.Դանիելյան թեմաներով հայտերը գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորում ստանալու համար:

2. Լսեցին - Ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը:

Որոշեցին - Ատեստավորել

1. Մեխանիկայի ամբիոնի ասպիրանտներին

- Ավետիք Վարդանի Մելքոնյան - երկու տարվա ասպիրանտ
- Արեգ Աշոտի Ստեփանյան - երկու տարվա ասպիրանտ
- Արփիկ Զեյան - մեկ տարվա ասպիրանտ /հեռակա/
- Աննա Գևորգյան - մեկ տարվա ասպիրանտ /հեռակա/
- Սեյդ Ռեզա Մոթալլեբի /Իրան/ - մեկ տարվա ասպիրանտ
- Դարյադար Մոհամմադ /Իրան/ - մեկ տարվա ասպիրանտ
- Բեյրուզ Յազդիզադե /Իրան/ - երկու տարվա ասպիրանտ
- Շարիֆրան Ռեզա /Իրան/ - երեք տարվա ասպիրանտ
- Մասուդ Ռեզա /Իրան/ - երկու տարվա ասպիրանտ
- Մոհամմադ Քահրիզի /Իրան/ - երկու տարվա ասպիրանտ

2. ***Դիֆերենցիալ հավասարումների ամբիոնի ասպիրանտներին***
Վահան Վարազդատի Սիմոնյան – երեք տարվա ասպիրանտ
Գևորգ Մելսիկի Թովիկյան – երկու տարվա ասպիրանտ
Սայեդ Ալի Յուսեֆին Մաթիկուլաեյիին (Իրան) - երեք տարվա ասպիրանտ
Էնայաթուլահ Սազգար (Իրան) - երկու տարվա ասպիրանտ
Սվետլանա Օսիպովային - երկու տարվա /հայցորդ/
Տիգրան Խուդոյանին - երկու տարվա /հայցորդ/

3. ***Օպտիմալ կառավարման տեսության և մոտավոր մեթոդների ամբիոնի ասպիրանտներին***
Ռաֆայել Էդվարդի Չախմախչյան - մեկ տարվա ասպիրանտ

4. ***Հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության ամբիոնի ասպիրանտներին***
Ելենա Գևորգյան - մեկ տարվա ասպիրանտ
Հրաչյա Հարությունյան - մեկ տարվա ասպիրանտ
Ռուբեն Էդուարդի Դանիելյան - երեք տարվա ասպիրանտ /հեռակա/

5. ***Ֆունկցիաների տեսության ամբիոնի ասպիրանտներին***
Սուրեն Աշոտի Վաղարշակյան – երկու տարվա ասպիրանտ
Լևոն Նուրբեկյան – երկու տարվա ասպիրանտ
Ֆեռեշթ Գոլդուստի (Իրան) – երկու տարվա ասպիրանտ
Աբդուլմաջիդ Նազարզադեհ (Իրան) – երկու տարվա ասպիրանտ
Ալի Ռեզա Էմրան (Իրան) – երկու տարվա ասպիրանտ

6. ***Հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի ասպիրանտներին***
Աշոտ Սարգսի Փահլևանյան - երկու տարվա ասպիրանտ
Աննա Գևորգյան - երկու տարվա ասպիրանտ
Զուլֆաղարի Փարվանեհ Էբրահիմիին (Իրան) - մեկ տարվա ասպիրանտ
Ամիր Էհսանի (Իրան)- երկու տարվա ասպիրանտ
Ջահանգիր Հաթամի Դոլամիհոսսեին (Իրան) -երկու տարվա ասպիրանտ
Իբրահիմ Նազարի (Իրան) - երեք տարվա ասպիրանտ
Համիդ Ռեզա Ռուստամի (Իրան) - երեք տարվա ասպիրանտ

7. Մաթեմատիկական անալիզի ամբիոնի ասպիրանտին

Նելլի Թաթուլի Գափոյան - մեկ տարվա ասպիրանտ

8. Ակտուար մաթեմատիկայի ամբիոնի ասպիրանտներին

Աննա Արմենի Սայադյան- մեկ տարվա ասպիրանտ

Մանե Գագիկի Գևորգյան- մեկ տարվա ասպիրանտ

Չայկ Աշոտի Չախինյան - մեկ տարվա ասպիրանտ

Նինա Տիգրանի Բալայան- մեկ տարվա ասպիրանտ

Սոհամնադ Էրրահիմ Ալաեի (Իրան) - երկու տարվա ասպիրանտ

3. Լսեցին – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսի (մաթեմատիկա) և թղթակից անդամի (մեխանիկա) առաջադրում:

ա/ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսի (մաթեմատիկա) առաջարկվեց

Ֆիզ.մաթ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ

Գ.Գ.Գևորգյանի թեկնածությունը:

Խորհուրդը փակ (զաղտնի) քվեարկությամբ միաձայն (27 կողմ, դեմ չկա),

Որոշեց – Առաջարկել ԵՊՀ գիտական խորհրդին առաջադրել ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, Ֆիզ.մաթ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Գեղամ Գրիգորի Գևորգյանի թեկնածությունը ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս ընտրվելու համար մաթեմատիկա մասնագիտության գծով:

բ/ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամի (մեխանիկա) առաջարկվեց

Ֆիզ.մաթ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Է.Խ.Գրիգորյանի

թեկնածությունը:

Խորհուրդը փակ (զաղտնի) քվեարկությամբ միաձայն (27 կողմ, դեմ չկա),

Որոշեց – Առաջարկել ԵՊՀ գիտական խորհրդին առաջադրել Ֆիզ.մաթ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Էդվարդ Խոսրովի Գրիգորյանի թեկնածությունը ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ ընտրվելու համար մեխանիկա մասնագիտության գծով :

4. Լսեցին - «Ակտուար մաթեմատիկայի» ամբիոնի և մասնագիտության վերանվանման հարցը:

Ելույթ ունեցան ֆակուլտետի դեկան Ա.Սահակյանը և ամբիոնի վարիչ Կ.Ավետիսյանը՝ ներկայացնելով քննարկվող հարցը:

Որոշեցին - Դիմել ԵՊՀ գիտական խորհրդին հետևյալ առաջարկներով (հիմնավորումը կցվում է).

1. «Ակտուար մաթեմատիկայի» ամբիոնը վերանվանել «Ակտուարական մաթեմատիկայի» ամբիոն:
2. Դիմել ՀՀ Կառավարությանը նրա՝ 2007թ. հաստատած Բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկում «Ակտուար մաթեմատիկա» մասնագիտությունը վերանվանել «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա»:
Շրջանավարտներին տրվող որակավորումները վերանվանել՝ «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի բակալավր/մագիստրոս»:

5. Լսեցին - Հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության ամբիոնի ասիստենտ, ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու Խ.Լ.Վարդանյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորության հարցը:

Ներկայացվեց հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության ամբիոնի կարծիքը՝ ամբիոնի նիստի արձանագրությունից քաղվածքի տեսքով, ըստ որի Խ.Լ.Վարդանյանը երաշխավորվում է դոցենտի կոչում ստանալու համար:

Ներկայացվեց մրցութային հանձնաժողովի եզրակացությունը այն մասին, որ ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու Խ.Լ.Վարդանյանի կողմից ներկայացված փաստաթղթերը լիովին բավարարում են պահանջվող պայմաններին և նա երաշխավորվում է դոցենտի գիտական կոչում ստանալու համար:

Խորհուրդը փակ (զաղտնի) քվեարկությամբ միաձայն (27 կողմ, դեմ չկա),

Որոշեց - Երաշխավորել հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության ամբիոնի ասիստենտ, ֆիզ.մաթ. գիտ. թեկնածու Խաչատուր Լորիկի Վարդանյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար:

6 .Լսեցին - Հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.դոկտոր
Ս.Հ.Դալալյանի «Գծային տարածություններ և գծային
արտապատկերներ» ձեռնարկը հրատարակման ներկայացնելու հարցը:
Ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու, դոցենտ Վ.Ս.Աթաբեկյանը ներկայացրեց
ֆակուլտետի մեթոդական խորհրդի որոշումը, համաձայն որի խորհուրդը
միաձայն երաշխավորել է վերոնշյալ ձեռնարկը հրատարակման
ներկայացնելու համար: Ձեռնարկը հնարավորություն կտա
մաթեմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտություններով
ուսանողներին, ասպիրանտներին խորը գիտելիքներ ստանալ
հանրահաշվի բնագավառում :
Ելույթ ունեցան դեկան, պրոֆեսոր Ա.Ա.Սահակյանը, ամբիոնի վարիչ,
պրոֆեսոր Յու.Մ.Մովսիսյանը, ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու, դոցենտ
Ա.Կ.Թասլաքյանը: Նրանք նշեցին ձեռնարկի կարևորությունը
ուսումնական գործընթացում:

Որոշեցին - Ս.Հ.Դալալյանի «Գծային տարածություններ և գծային
արտապատկերներ» ձեռնարկը ներկայացնել հրատարակման:

Խորհրդի նախագահ

Ա.Ա.Սահակյան

Գիտքարտուղար

Ս.Հ.Զիլավյան